ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ
НАУЧНАЯ ИНФОРМАЦИЯ

ԱՐՄԱՎԻՐԻ 1974—1976 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Նախորդ տարիներին Արմավիրի արշավախումբը կարողացավ հիմնականում ավարտել միջնաբերդի արևմտյան ծայրամասի պեղումները։ Չպեղված մնացած համեմատաբար փոքր տարածության ուսումնասիրությունը շարունակվեց հաշվետու ժամանակաշրջանում։ Արշավախմբի ուժերը կենտրոնացվեցին մի նոր տեղամասում, արևմտյան լանջի վերին հատվածում։ Այստեղ բլրի գագաթին կանգնած շենքի մոտակայքում սկիզբ է առնում ուշադրության արժանի և հեռանկարային մի տեղամաս (նկ. 1)։ Դեպի արևմուտք իջնող տեղանքի ընդհանուր առմամբ հարթ մակերեսը կտրտված է համեմատաբար վերջերս փորված խրամատներով։ Սակայն տեղում երևացող գերազանց հղկված բազալտե վեմերի բեկորները հույս էին ներշնչում, որ այստեղ պետք է որ գտնվեր կարևոր մի կառույց՝ հնագիտական նյութերով հանդերձ։ Գագաթի մոտ արևմտյան լանջը խիստ ժայռոտ է։ Բնական ժայռը դուրս է գալիս մեծ ելանգվածներով։ Ուստի պեղումները սկսվեցին այդ ժայռերից ներքև, մինչև առաջին խրամատը հասնող տարածքում։ Այստեղ աստիճանաբար ուրվագծվեց մի համալիր՝ կազմված բազմաթիվ սենյակներից, որոնց նկարագրությունը, ըստ հերթականության, ներկայացվում է ստորև։

Պեղումները սկսվեցին 28 M և 28 N քառակուսիներում։ Բացվեց երկու սենյակ՝ № 1, որը պեղվեց նաև հաջորդ տարիներին և № 2, որի բացումն ավարտվեց հաշվետու ժամանակաշրջանում։ Պեղումների ժամանակ պարզվեց, որ այդ սենյակների արևելյան պատը հենվում է ժայռին, որը տեղ-տեղ առաջ է գալիս (օրինակ. № 2 սենյակում) նրա հատակին տալով թեք բնույթ։ № 1 սենյակի արևելյան պատի ստորին մասը շարված է միջին չափի չեչաքարերով, իսկ վերին մասը՝ հում աղյուսով։ Արևելյան պատի մեջ բացվեց մի հոր (խորությունը 1,0 մ, տրամագիծը՝ 1,30 մ) միջնադարյան խեցեղենի մնացորդներով։ Հորից հարավ արևելյան պատը անկյուն էր տալիս կազմելով մի որմնահեց (երկարությունը 3,55, լայնքը՝ 1 մ)։ Սենյակի հյուսիսային պատից պահպանվել էր հիմնականում նրա քարե ներքնամասը։ Այն աստիճան առ աստիճան իջնում էր արևելքից արևմուտք։ Ներքևում պահպանվել էր նաև աղյուսե վերնամասի մի փոքր հատված։ Պատի վրա գտնվեց խորանարդաձև, մեջը անցքով տուֆե մի քար։ Արևմտյան պատը ավելի վատ էր պահպանված։ Նրա աղյուսե մասը դժվարությամբ էր բացվում։

Սենյակի վերևի շերտերը հանելիս դուրս եկավ ուրարտական, հելլենիստական ժամանակաշրջանի, միջնադարյան խեցեղեն խառը վիճակում։ Սենյակի հարավային մասում երևան եկան միջնադարյան պատերի և հատակների հետքեր, որոնց հարևանությամբ գտնվեցին բազալտե մշակված քարերի բեկորներ՝ մեկը աստիճանաձև, մյուսը՝ խորշաձև։ Բազալտե լավ մշակված քարեր գտնվեցին սենյակի տարածքում, ինչպես նաև արևելյան պատի տակ։

Սենյակի կենտրոնական մասում, նրա արևելյան և արևմտյան պատերից մոտ 0,50 մ հեռավորության վրա բացվեց միջնադարյան կլորավուն մի կառույց, հավանաբար հոր, շարված շաղախով ամրացված չեչաքարով։ Նրա ու սենյակի արևելյան պատի արանքում գտնվեց մի սրբատաշ քար և սկյութական տիպի բրոնզե եռաթև նետասլաք։ Սենյակի մեջ խորանալիս խեցեղենի կերպարը մինչև վերջ չհստակացավ։ Մի առ ժամանակ հելլենիստական դարաշրջանի խեցեղենը ստվարացավ, բայց չէին պակասում միջնադարյան և ուրարտական խեցեղենի բեկորները, այդ թվում նաև կարասների։

Առաջին սենյակին հյուսիսից հարում է № 2 սենյակը։ Այն բացված է ամբողջովին և ունի արևելքից արևմուտք ձգվող նեղ ուղղանկյան տեսք։ Արևելյան պատի քարե հիմքերը նստած են բարձրադիր ժայռի վրա, իսկ հյուսիսային և հարավային պատերի հիմքերը աստիճանաձև խորանում են մինչև 3,50 մ և միանում են արևմտյան պատի հիմքերին։ Հյուսիսային պատի աղյուսե վերնամասը կարծես քիչ առաջ է եկած և թվում է հազցված է քարե ներքնամասին։ Այս կավե վերնամասի վրա ուրվագծվում է



Abb. 1

միջնադարյան մի հոր (տրամագիծը 0,80 մ) խոհանոցային խեցեղենով և երևում են միջնադարյան սենյակի եղեգե ծածկի մնացորդներ։

Այս սենյակի վերևի շերտերում նույն օրինաչափություններն են երևում, ինչ որ հարևան սենյակում։ Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում սենյակի երկարությամբ բացվող շերտագրական նշանակությամբ կտրվածքը, որը փաստորեն 28 M քառակուսու հյուսիսային կողն է կազմում։ Կտրվածքում լավ երևում էր ածուխի 0,50—0,80 մետրանոց մի շերտ, որը արևելքից իջնում էր արևմուտք։ Նրա արևելյան ծայրում նստած էր բազալտե մի վեմ լավ մշակված երեսներով։ Ածուխի շերտից ներքև գտնվեցին նաև արտադրական նշանակության տուֆե քարեր, ուրարտական կարասների բեկորներ։ Սենյակը խորացնելիս նրա արևմտյան մասում մեծ թվով ուրարտական խեցեղեն էր դուրս գալիս։

1976 թ. հնարավորություն ունեցանք նոր սենյակների պեղումներ սկսել № 2-ից հյուսիս և № 1-ից արևմուտք։

№ 2 սենյակի հյուսիսային պատի հետ մեկտեղ բացվեց մի նոր սենյակ, № 3, որը, ինչպես պարզվեց հաջորդ տարիների պեղումներից, փաստորեն մի երկար միջանցքի մասն էր կազմում։ Նրա պատերը, որոնք նույնպես աղյուսից էին, քարե հիմքերի վրա, բացվեցին մոտ 8 մ երկարությամբ։ Նրանք ավելի արևելքից էին սկիզբ առնում, քան № 1 և № 2 սենյակներինը. հավանաբար ժայռոտ զանգվածը այստեղ քիչ ավելի ետ էր ընկնում։ Սենյակում բացվեց վառված աղյուսի շերտ, ածուխ։ Հյուսիսային պատի տակ որմնանկարների, ավելի ճիշտ կապույտ և կարմիր խայտերի հետքեր երևացին։

№ 4 սենյակի արևելյան պատը բացվեց № 1 սենյակից դեպի արևմուտք, բավական մեծ տարածության վրա։ Պատի մեջ փորված էր մի հոր (տրամագիծը 1—1,10 մ, խորությունը 0,70 մ) միջնադարյան և անտիկ խեցեղենի բեկորներով։ Աղյուսե պատի տակ, մոտ 0,60 մ խորության վրա գտնվեց հելլենիստական դարաշրջանի գունազարդ թասի մեծ բեկոր։ Այստեղ նկատվեցին ինչ-որ հատակի հետքեր, որոնց տակ արդեն ուրարտական որմնանկարների բեկորներ գտնվեցին։ Այս պատի հյուսիսային մասում բացվեցին ևս երեք միջնադարյան հորեր, որոնք դգալի վնաս էին հասցրել № 4 սենյակի հյուսիս-արևելյան անկյունին։ Տեղանքին համեմատ իջնելով դեպի հարավ, պատը անկյուն էր տալիս ու շրջվում արևմտյան ուղղությամբ։ Պատերի երկարությունը կասկած չէր թողնում, որ գործ ենք ունենալու մի մեծ սենյակի՝ դահլիճի հետ, դա հաստատվեց հաջորդ տարիների պեղումների ընթացքում։ Պեղումներ են կատարվել նաև վերևում նշված սենյակների հարևանությամբ, առանց, սակայն, դգալի խորանալու (քառակուսիներ 25, 26, 27 M, 25, 26 N)։ № 1 և № 2 սենյակներից արևմուտք բացվեցին քարե պատերի հետքեր, հոր, թոնիրներ, քարարկղային թաղում։ Այստեղ գտնվեցին անցքով խորանարդաձև քար, անտիկ և միջնադարյան խեցեղեն, հելլենիստական դարաշրջանի կավե արձանիկ։

Ամրոցի մուտքի մոտ, հյուսիսային պարսպից ներս, նախորդ տարիներին բացվել էին նույնատիպ սենյակներ, որոնցից 6-ը պեղվեց հաշվետու ժամանակաշրջանում։ Հենց առաջին իսկ օրից պարզվեց, որ նրա արևմտյան պատը մյուս սենյակների պատերի համեմատությամբ անսովոր հաստություն ունի (3,60 մ) և որ այն փաստորեն կազմված է երկու պատերից, որոնց քարային մասը տեղանքին համեմատ աստիճանաձև իջնում էր հարավից հյուսիս։ Սենյակը լցված էր քարերով։ Նրա արևմտյան մասում բավականին կանոնավոր պատ էր ուրվագծվում, որի քարերը հարթ երեսներով դեպի արևելք էին ուղղված։ Հարավից բացվեց չեչաքարե կանոնավոր, բայց հողի շերտի վրա նստած մի պատ։ Գտնվեց նաև սենյակի արևելյան պատը, որով պարզվեց, որ սենյակի լայնքը քիչ ավելի մեծ է, քան նախորդներինը (4 մ)։ Հյուսիսային պատը, որը համընկնում էր պարսպի ներսի երեսին, դժվար էր գտնել, քանի որ մնում էին միայն որպես հիմք ծառայող ժայռերը։

Բացվեց ժայռի մեջ փորված և պարսպի քարերի տակով անցնող մեկ առու, որն իր նմաններն ունի պարսպի մյուս հատվածներում։ Սենյակում տեղ-տեղ պահպանված էր հատակը, որը նստած էր հրաբխային բնական ժայռի վրա։ Այստեղ գտնված նյութը գերազանցապես ուրարտական էր, թեպետ հանդիպում են և միջնադարյան բեկորներ։

Ինչպես վերևում ասվեց, պեղումներ են կատարվել նաև ամրոցի արևմտյան, ուրարտական երկու պարիսպների միջև ընկած հատվածում, հատկապես նրա հարավ-արևմտյան անկյունում։ Այստեղ ուսումնասիրվեցին ուրարտական հին պարսպի՝ նախորդ բացված մեծ դահլիճի արևմտյան պատին ու նրան զուգահեռ ընթացող լրացուցիչ պատին միանալու հանգամանքները։

Պեղումների ընթացքում պարզվեց, որ ուրարտական այս պատերի հանգույցը օգտագործվել է ավելի ուշ ժամանակաշրջանում։ Այդ մասին են վկայում խոշոր քարերից կազմված հիմքի վրա չեչաքարերով շարված նոր պատը, նրա հետ կապված շերտագրական որոշ դիտողություններ (պատը նստած է վառված շերտի վրա,

որի միջից դուրս են գալիս անտիկ խեցեղենի բեկորներ), ինչպես նաև այս հանգույցում հանդիպող հնագիտական նյութը (հելլենիստական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենի բեկորներ, միջնադարյան խեցեղեն)։

Պեղումները շարունակվեցին նաև հանգույցի առջև բացվող հրապարակում, որտեղ նախորդ տարիներում կուտակված հող կար։ Այստեղ բացվեց դեռևս նախորդ տարիներում երևացող արևելքից արևմուտք ընթացող պատը (լայնքը՝ 1,80), որն անկյուն էր կազմում հյուսիսից հարավ գնացող պատի հետ (լայնքը 1,50)։ Այսպիսով ուրվագծվեց մի մեծ քառանկյունի սենյակ։ Սենյակի հյուսիս-արևելյան անկյունում բացվեց մի հարթակ, որի հետ կարող են կապված լինել այստեղ գտնված երկաթե գործիքների ու իրերի մեծ խումբը ու խարամի հետքերը։ Սենյակից գտնված խեցեղենը միատարր չէ. խառը վիճակում հանդիպում են ուրարտական, անտիկ և միջնադարյան բեկորներ։

Ամբողջացնելու համար ստացված պատկերը՝ մասնակի աշխատանքներ տարվեցին նաև ամրոցի արևմտյան հատվածի որոշ տեղերում։ Օրինակ, հիմքերը բացելու նպատակով աշխատանքներ են տարվել ուրարտական զուգահեռ պատերի (երկրորդ և երրորդ) արևմտյան ծայրում։

Ստուգողական պեղումներ են կատարվել նաև Արմավիրի բլուրը շրջապատող դաշտերում, նրանց հյուսիս-արևելյան մասերում։ Այստեղ փորված հետախուզական խրամատներից ստացված խեցեղենը անտիկ ու միջնադարյան կերպար ունի։

Պեղումների ընթացքում հնագիտական նյութը վերաբերում է տարբեր ժամանակաշրջանների։ Ուրարտական են բազալտե քառանկյունաձև կամ խորանարդաձև վեմերը, որոնք աչքի են ընկնում երեսների ու կողերի փայլուն մշակմամբ։ Նրանց հայտնաբերման շերտագրական հանգամանքները կասկած չեն թողնում, որ այն կառույցը, որին նրանք պատկանել են, գոյատևել է երկար ժամանակ և, դատելով որոշ հանգամանքներից, քանդվել միջին դարերում[1]։ Նման վեմերից են կերտված եղել ուրարտական աշտարակաձև կառույցները, մի դեպքում (Կարմիր բլուր) դեկորատիվ, մյուս դեպքում (Ադլչեվազ)՝ կոնստրուկտիվ նշանակությամբ։ Արմավիրի քարերը պատկանել են առանձին կանգնած, գուցե պաշտամունքային նշանակություն ունեցող, փոքր աշտարակաձև կառույցի կամ պարզապես առնչվում են հայտնաբերման վայրին անմիջականորեն հարևան տաճարային շենքի հետ։ Նույն այս միջավայրում և անգամ պակաս խորության վրա գտնվեց խորշաձև փոքր կերտվածք բազալտից, որը, ինչպես պարզվեց, դեկորատիվ խուլ պատուհանի մի մասն էր կազմում (նկ. 2)։



Նկ. 2

Այժմ, երբ հայտնի են մի շարք ուրարտական բարձրաքանդակներ, նույնպիսի պատուհաններով, իսկ Թոփրախկալեում և Հայկաբերդի (Զաուշթեփե) ուրարտական հնավայրում գտնվել են ամբողջական պատուհաններ, կարելի է վստահությամբ ասել, որ ուրարտական ճարտարապետությանը հայտնի է եղել հարդարման այդ ձևը, որը ապա փոխանցվել է աքեմենյան Իրանին (տես Զինդան-ի Սուլեյմանի և Քաաբա-ի Զարդուշտ հայտնի աշտարակավոր շենքերը, որոնց մուգ դույնի պատերը երեք կողմից հարդարված են բաց դույնի քարից պատրաստված խուլ պատուհաններով, որոնք դուրկ են կիրառական որևէ նշանակությունից ու հետապնդում են լոկ դեկորատիվ նպատակներ)։ Արմավիրի պատուհանը իր բաց գույնով ներդաշնակում է սև գույնի քարերով շարված տա-

[1] Г. А. Тирацян, Урартский Армавир (по данным археологических раскопок), «Культура Востока. Древность и раннее средневековье», Л., 1979.

ճարային կառույցի հետ, որին նա ամենայն հավանականությամբ պատկանել է։ Բազմադուությունյան այս սկզբունքը, որը հատուկ է իրանական մի շարք հուշարձաններին, ինչպես երևվում է, իր ակունքներն ունի ուրարտական ճարտարապետության մեջ։

Ուշադրավ պետք է համարել որմնանկարների բեկորների երևան գալը։ Դժբախտաբար նրանք շատ են տուժել հրդեհից, այնպես որ գույները դժվար են որոշվում։ Համենայն դեպս կարմիրն ու կապույտը, սևն ու սպիտակը երևում են. ընթերցվում են նաև որմնանկարների մոտիվները՝ մարդկային, կենդանական (հավանաբար թևավոր ցուլեր կամ առյուծներ), բուսական (կենաց ծառ, արմավենի) և երկրաչափական։ Չնայած բեկորների վոքրությանը, երևում է, որ Արմավիրի որմնանկարները նույնպես մի շարք գոտիներից էին կազմված եղել։ Հատկապես ուշադրության արժանի է քուրմի պատկերը՝ մի ձեռքում սրբազան պտուղը, մյուսում՝ կողով. մյուս մոտիվների նմանությամբ սա իր զուգահեռներն ունի Արինբերդի ու Ալթընթեփեի ուրարտական որմնանկարների մեջ։ Չնայած Արմավիրում գտնված բեկորների համեստ բնույթին, այժմ կասկած չի կարող լինել, որ ուրարտական այս հին կենտրոնում, Արգիշտիխինիլիի արևելյան ամրոցում ևս որմնանկարչությունը զարգացում է ապրել։

1976 թ. Արմավիրում գտնվեց կրաքարից (գիպս) պատրաստված գլանաձև մի կնիքի ստորին կեսը։ Նրա հատակին փորագրված է աստված խորհրդանշող թևավոր սկավառակ, տակը պառկած կենդանի։ Կնիքի կողքերին երևում են թևավոր կենդանու պատկերներ, կենաց ծառ, թևավոր մարդ, աստղային նշաններ և այլն։ Սա Արմավիրի պեղումներից գտնված երկրորդ կնիքն է։ Երկու այլ կնիքներ ձեռք էին բերվել Ն. Մառի կողմից Արմավիրի բլուրի շրջակայքի գյուղերի բնակիչներից։

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ամենայն հավանականությամբ արտադրության մեջ կիրառություն գտած սալերը, որոնց կոնկրետ նշանակությունը մինչև վերջ պարզ չէ։ Նրանցից մեկը կլոր է, մեջտեղից անցքով և ձագարաձև բացվածքով։ Տակի քարի վրա պտտվելու եղանակով այն հավանաբար յուղատու սերմեր ճզմելուն էր ծառայում։ Մյուս քարը խորանարդաձև է, համեմատաբար մեծ ձագարաձև անցքով՝ վերից և նրա հետ հաղորդակցվող կլոր փոքր անցքով՝ առջևից։ Գտնվել են խորանարդաձև տուֆե քարեր նեղ միջանցիկ անցքերով։ Նման քարեր հայտնի են Կարմիր բլուրից, Արինբերդից ու Կայալըդերեից (ավելի տափակ քար) և նրանց կապը ջրամատակարարման հետ բացառված չէ[2]։ Քարե առարկաներից պետք է հիշել նաև սև գույնի տուֆե ծանրոցը և բազալտե սանդաքարը։

Ուշադրության արժանի է երկաթե իրերի հավաքածուն՝ գտնված ամրոցի հարավ-արևմտյան մեծ սենյակից։ Թեպետ պահպանվածության



Նկ. 3

վիճակը այնքան էլ գոհացուցիչ չէ, կարելի է տարբերել մի շարք աշխատանքային գործիքներ, օրինակ, մեծ մանգաղ, դաստապանի վրա մեխերի ու հավանաբար բրոնզե թերթիկի հետքերով, թոնիրներում ու օջախներում օգտագործվող քերիչ-ակիշի ստորին սկավառակաձև մաս, խուփի բեկորներ, պայտաձև իր, ուղիղ ու կեռ ձողեր։ Ուշ ուրարտական ժամանակաշրջանի հետ է կապվում սկյութական տիպի բրոնզե եռաթև սլաքը (նկ. 3₇), որն իր զուգահեռներն ունի ուրարտական և ետուրարտական հուշարձաններում։

[2] C. A. Burney, A first season of excavations at the Urartian citadel of Kayalidere, „Anatolian Studies", vol. XVI, 1966, p. 81, pl. XII, B.

Ուրարտական խեցեղենը հարուստ է ներկայացված։ Հատկապես պետք է նշել № 2 սենյակի արևմտյան մասում, մեծ խորությունից գտնված ուրարտական կավանոթների հավաքածուն։ Հանդիպում են ուրարտական խեցեգործության բնորոշ՝ կարմիր փայլեցրած և բաց գույնի, օրինակները։ Խեցեղենի տեսակներին ևս հարուստ է, կան ամենատարբեր ձևերի կավանոթներ, որոնք իրենց կիրառությունն ունեին տնտեսության ու կենցաղի մեջ։ Խոշոր հաստապատ կարասներ Արմավիրում գտնվել էին դեռևս նախորդ տարիներին։ Նրանք կանգուն վիճակում կիսով չափ թաղված էին հատակի մեջ և ծառայում էին ինչպես հացահատիկի, այնպես էլ գինու պահեստավորման համար։ Գտնվել են նրանց բազմաթիվ բեկորներ, բնորոշ ձևի պսակով (դեպի դուրս թեքված, վերևից տափակ), հիմքում պարանաձև ռելիեֆ գոտիով։ Հանդիպում են նաև ավելի փոքր կարասների բեկորներ, համեմատաբար բարակ պատերով։ Նրանք ունեն թեք պսակներ, վրան զուգահեռ համակենտրոն ռելիեֆ գոտիներ ու ակոսներ։ Մի կարասի շուրթը ուռուցիկ է, կլորավուն դեպի դուրս ցցված։ Մեծ տաշտերի ու կոնքերի բեկորները ունեն բնորոշ ձևի շրթեր՝ դեպի դուրս կլորացող, հիմքում (գրսից) լայն ակոսով։ Կարմիր փայլեցրած ավելի փոքր մի անոթ ունի թեք պսակ, վերևից տափակ, ուղիղ, նեղ շուրթ։ Անոթի իրանը զարդարված է նեղ զուգահեռ ակոսներով։ Կճուճներից մեկը, որ դարձյալ փայլեցրած է, ունի նեղ, հարթ նրստուկ, խիստ ուռուցիկ իրան, ցածր վիզ և հեռացող շուրթեր։ Մյուսը բաց գույնի է, հաստացող իրանով, կարճ վզով և գլանաձև շուրթով։

Ուրարտական խեցեգործությանը բնորոշ էին այսպես կոչված «սիգարաձև» անոթները, որոնք մասնագետների կարծիքով նախատեսված էին գարեջրի պատրաստման համար։ Երկարավուն, համաչափ լայնացող իրանով, ցածր վզով, դեպի դուրս թեքվող հարթ շուրթերով այդպիսի անոթներ մեծ թվով գտնվել են Կարմիր բլուրում, Էրեբունիում և այլուր։

Թասերի բեկորներն ունեն կլոր ոտք, հարթ կամ դրսից ներճկված հատակ, թմբիկավոր հաստ շուրթ, հիմքում բնորոշ նեղ ակոսով։ Թասերից մեկը ներսից ներկված է ամբողջությամբ, իսկ դրսից՝ մինչև իրանի կեսը, որով հիշեցնում է անտիկ դարաշրջանի կավանոթները։ Հանդիպում են Ճրագներ (որոնցից մեկը անսովոր ձևի է՝ մեջտեղում կլոր միջնորմով), հարթ հատակով թաղարներ, կլոր, ոչ բարձր կողերով, փռված մեծ անոթներ, պայտաձև փոքր անոթներ, որոնք իրենց զուգահեռներն ունեն ուրարտական մյուս կենտրոններում և որոնց նշանակությունը մինչև վերջ պարզված չէ (կթղանե՞ր)։ Առանձնահատուկ տեղ են գրավում ծորակավոր անոթի երկարավուն գլանաձև քիթը՝ եռաթերթաձև ծայրով, ծածկված շագանակագույն ներկի շերտով և մի կանթանի սափորը՝ ծածկված բաց գույնի քսուկի շերտով, ավելի բնորոշ ետուրարտական ժամանակաշրջանին (նկ. 3, 4)։ Անոթների վրա կան տարբեր նշաններ՝ թաց կավի վրա արված (ուղղահայաց լայն գծեր), փորագրված (խաչաձև կամ նետասլաքի ձևի) ու դրոշմված (ձվաձև եղրագծերի մեջ արված կենաց ծառեր)։ Ուրարտական դարաշրջանին են վերաբերում բլրի հարավային ստորոտում պատահականորեն բացված մոխրագույն կճուճները, մեկը եղունգով արված զարդերից կազմված գոտիներով, մյուսը՝ փորագիր եռանկյունիներով, երրորդը՝ անցքավոր ունկով, որոնք իրենց զուգահեռներն ունեն երկաթեդարյան խեցեղենի մեջ։

Հելլենիստական դարաշրջանի նյութերը ներկայացված են խեցեղենով, զարդերով, կավե արձանիկով։ Նախորդ տարիների հետ համեմատած խեցեղենը պակաս հարուստ է, որ բացատրվում է ամրոցի ծայրարևմտյան հատվածի մեծ մասի՝ նախկինում պեղված լինելու հանգամանքով։ Միևնույն ժամանակ պետք է նշել, որ կավանոթների տիպերը հիմնականում կրկնում են Արմավիրից հայտնի տեսակներին[3], իր անզարդ, գունազարդ, սև փայլեցրած ու կենդանակերպ նմուշներով (նկ., նկ 3, 4)։ Դրանք են՝ միկանթանի սափորի վերնամասը երեքնուկաձև պսակով և կտրվածքում կլոր աղեղնաձև կանթով, կոնքի բեկորներ՝ շուրթի տակ լայն ներճկված գոտիով, լայնաբերան ծորակավոր կճուճի բեկոր շուրթի վրա դրսից ու ներսից ներկի բնորոշ շերտերով։ Հանդիպում են տափաշշերի գունազարդ և անզարդ բեկորներ։ Ալաբաստրոնաձև անոթների բեկորներից մեկը ավանդական հաստապատ, կարմիր ներկված տեսակից է, մյուսը՝ նրբախեցի է, վրան սպիտակ ներկով նախաշազարդած։ Թասերը երկու տիպի են. այսպես կոչված խաչազարդ թասեր, այս կամ այն չափով պրոֆիլավորված շուրթերով, և կլորավուն հատակով թասեր՝ դեպի դուրս լայնացող բարակ շուրթով։ Այս թասերը

---

3 Б. Н. Аракелян, О некоторых результатах археологического изучения древнего Армавира, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4։ Г. А. Тирацян, Древнеармянская керамика из раскопок Армавира (опыт классификации и датировки), «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1։

բոլորը ներկված են կամ համատարած ձևով ներսից ու մասամբ կիսով չափ դրսից, կամ գունազարդված են խաչանման ու շերտավոր մոտիվներով։ Ուշադրության արժանի է թռչնակերպ սև փայլեցրած անոթը, որից պահպանվել են պոչն ու տափակ հատակը։ Այն անկասկած իր տեղն ունի Արմավիրի հելլենիստական դարաշրջանի կենդանակերպ անոթների շարքում։ Գունազարդ խեցեղենը, բացի վերևում հիշատակված մի քանի նմուշներից, ներկայացված է մի կանթանի կճուճի, ձվաձև թասի, տափաշշի ու այլ անոթների բեկորներով։ Կճուճի շագանակագույն ֆոնի վրա կարմիր և սև ներկով արված են հորիզոնական գոտիներ, եռանկյունիներ, գալարներ։ Գունազարդ խեցեղենը կազմում է Արմավիրի խեցեգործության բնորոշ կողմը և այն չի դադարում հետաքրքրել Հայաստանի հելլենիստական դարաշրջանի մշակույթը ուսումնասիրողներին։ Արմավիրի նշված ժամանակաշրջանի խեցեղենի բնորոշ խումբ է կազմում սև փայլեցրած խեցեղենը, որն առաջին հայացքից հիշեցնում է ավելի հին դարաշրջանների նմուշները։ Գտնված բեկորներից մեկն ըմպանակի է, մյուսները՝ հորիզոնական նեղ ակոսներով, ուղղահայաց ռելիեֆ նեղ գոտիներով, ինչպես նաև կուտաձև փոքր փոսիկներով զարդարված կճուճներ։



Նկ. 4

Պեղումների ընթացքում գտնվել են քարե զարդարուն ճարմանդներ, ներճկված բրոնզե ապարանջանի բեկոր, սերդոլիկից ուլունք, ծովային խեցի, լավ հղկված օնիքսե հավանգի դաստակ և քարե սրաքար։

Առանձնապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում կավե արձանիկը (նկ. 5)։ Այն հիշեցնում է 1972 թ. Արմավիրում գտնված, երեխային կերակրող մորը պատկերող արձանիկը, միայն այն տարբերությամբ, որ այստեղ երեխան կանգնած է ու ձախ կողմից հակվել է մոր կրծքին։ Մայրը նստած է գահավորակին,

տքերը հենած նրա պատվանդանին, մի ձեռքով գրկել է երեխային, մյուսով կուրծքն է ազատել։ Մոր զգեստի թեք և ուղղահայաց ծալքերը իջնում են ներքև։ Հստակորեն է վերարտադրված փիզը երիզող օձիքը։ Թեև արձանիկի գլուխը չի պահպանված, բայց լավ

Նկ. 5

երևում են նրա երկու կողմից իջնող և բազուկները ծածկող գլխաշոր-թիկնոցի եզրերը։ Երեխայի մազերը վերարտադրված են սխեմատիկ զուգահեռ ոչ խոր ակոսներով։ Ամբողջ կոմպոզիցիան, մոր և երեխայի մարմինների մոդելավորումը ցույց է տալիս, որ վարպետը ծանոթ է հելլենիստական արվեստի նմուշներին։ Նման արձանիկներ, որոնք պատկերում են ըստ երևույթին մայր աստվածուհուն՝ Անահիտին, Արմավիրից բացի գտնվել են Արտաշատում և Վաղարշապատում[4]։

Միջնադարյան նյութը, որը գտնվել է բլրի վերևի շերտերից և հորերից, բաղկացած է խեցեղենից, մետաղե առարկաներից և զարդեղենից։ Գտնված սելջուկյան բրոնզե երկու դրամները, դրամագետ Խ. Մուշեղյանի կարծիքով վերաբերում են XII դարի երկրորդ կեսին և XIII դարի առաջին կեսին և որոշակի նշանակություն ունեն միջնադարյան շերտի ճիշտ թվագրման համար։ Խեցեղենի գերակշռող մասը կազմում է խոհանոցային խեցեղենը (կճուճներ, քրեղաններ, սափորներ)։ Ուշադրության արժանի են կարմիր անոթի բեկորը՝ թերթիկավոր կլոր դաշտարդերով և նույնպես կարմիր ներկով պատած տաշտի պսակի բեկորները, դրսից ռելիեֆ, ուղիղ և այիքաձև գոտիներով։ Ջնարակած խեցեղենը ներկայացվում է մի պնակի հատակով և այլ բեկորներով։

Մետաղե իրերից պետք է հիշատակել այգեգործի երկաթե կեռ դանակը, երկթև ծայրով, երկար պոչուկով երկաթե նետասլաքը և բրոնզե մատանին։

Գտնվել են երկնագույն մածուկից պատրաստված հարթ կամ բլթակավոր կողերով, տարբեր չափերի տակառաձև ու գնդաձև ուլունքներ։ Ուշադրության արժանի է այսպես կոչված աչքավոր մեծ ուլունքը, որ սև է և հարդարված է տարբեր գույնի շերտերից կազմված «աչքերով»։ Ինչպես հայտնի է, այս ուլունքները Հայաստանում ի հայտ են գալիս վաղ հայկական ժամանակաշրջանից, առատանում հելլենիստական նյութերի մեջ և անցնում միջնադար։

Միջնադարյան շերտում գտնվել են օբսիդիանից և կայծքարից պատրաստված աշխատանքային գործիքներ՝ կտրիչներ և մանգաղներ, որոնք անշուշտ պատահաբար են հայտնվել այստեղ ավելի խոր շերտերից։

Արմավիրի 1974—1976 թթ. պեղումների արդյունքները մի անգամ ևս բացահայտում են հուշարձանի բազմաշերտ բնույթը ու հաստատում նրանց նշանակությունը ուրարտական, հին հայկական՝ հելլենիստական ու միջնադարյան մշակույթների ուսումնասիրության համար։

Պատմ. գիտ. թեկնածու Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ

Ի. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

---

4 Բ. Ն. Առաքելյան, Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976, աղ. LXXXIV, LXXXV: Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանի անտիկ շրջանի կոլոսլաստիկան, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1977, № 5, աղ. I։